ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Մենք պարտավորվում ենք՝

- կառուցել, հիմնանորոգել և վերազինել մանկապարտեզները՝ ապահովելով մեր երեխաների որակյալ նախադպրոցական կրթությունը,
- աջակցել դպրոցներին՝ լուծելով նրանց հրատապ խնդիրները և բարելավելով կրթական միջավայրը,
- կառուցել և վերանորոգել մշակույթի տները՝ դարձնելով դրանք համայնքային կյանքի կենտրոններ,
- ստեղծել նոր խմբակներ և կազմակերպել մշակութային միջոցառումներ՝ զարգացնելով մեր համայնքի մշակութային կյանքը:

ՍՊՈՐՏ

Մենք պարտավորվում ենք իրականացնել՝

- սպորտդպրոցի և մարզահրապարակների կառուցում,
- առողջ ապրելակերպի և տարբեր սպորտային միջոցառումների կազմակերպում,

▪ ձեռքբերում ունեցած մարզիկների խրախուսում և աջակցություն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Մենք պարտավորվում ենք՝

▪ ստեղծել ապահով և զարգացնող միջավայր՝ երիտասարդների գաղափարների գեներացման և ոչ ֆորմալ կրթության համար,

▪ ապահովել երիտասարդների մասնակցությունը համայնքի կառավարման գործընթացին,

▪ խրախուսել երիտասարդության և ավագ սերնդի կապը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մենք պարտավորվում ենք իրականացնել՝

▪ բուժամբուլատորիաների կառուցում, վերանորոգում,

▪ անհրաժեշտ բժշկական սարքավորումների արդիականացում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Մենք պարտավորվում ենք իրականացնել՝

▪ ոռոգման համակարգի վերանորոգում և նորերի կառուցում,

▪ խորքային հորերի վերագործարկում, ջերմոցային տնտեսության զարգացում,

▪ գյուղմթերքների նոր շուկաների հայտնաբերման ուղղությամբ խորհրդատվական աջակցություն,

▪ այլընտրանքային էներգետիկ աղբյուրների ձեռք բերում և ընդլայնում, մասնավորապես՝ արևային ֆոտովոլտային կայանների քանակի ավելացում,

▪ աղբահանության համակարգի արդիականացում, նոր աղբամանների տեղադրում, սանմաքրման աշխատանքների որակի բարձրացում,

▪ նոր զբոսայգիների հիմնում, կանաչապատ տարածքների ավելացում և ծառատունկի կազմակերպում:

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Մենք պարտավորվում ենք իրականացնել միջոցառումներ՝ ուղղված թափառող շների խնդրի լուծմանը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Մենք պարտավորվում ենք ճանապարհաշինության և տրանսպորտի բնագավառում իրականացնել՝

▪ ասֆալտապատում, տուֆով սալարկում և բարեկարգում,

▪ ներհամայնքային տրանսպորտային երթուղու կազմակերպում,

▪ բնակիչների տրանսպորտային հասանելիության ապահովում:

Լուսավորության և կոմունիկացիայի բնագավառում՝

▪ լուսավորության նոր ցանցի կառուցում, հնի՝ արդիականացում,

▪ կոյուղագծերի վերանորոգում և նորի կառուցում,

▪ չգազիֆիկացված փողոցների գազիֆիկացում,

▪ խմելու ջրի ցանցի ընդլայնում, նոր ջրագծերի կառուցում: